Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2010 թ. N ------- Ա

ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով ջութակահար Սերգեյ Խաչատրյանի՝ երաժշտարվեստի կատարողական բնագավառում բացառիկ ընդունակություններն ու խոստումնալից ապագան, միջազգային տարբեր մրցույթներում մրցանակային բարձր տեղեր նվաճելու հանգամանքը, ինչպես նաև մշակույթի անվանի գործիչների միջնորդությունները՝ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

Սերգեյ Վլադիմիրի Խաչատրյանին (ծնված 1985 թ. ապրիլի 5-ին, հասցեն՝ ք. Երևան, Մոսկովյան 24, բն. 2) ազատել պարտադիր զինվորական ծառայությունից։

ՀՀ մշակույթի նախարար Հ.Պողոսյան

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Սերգեյ Խաչատրյանին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

Սերգեյ Խաչատրյանը (ծնված 1985 թ. ապրիլի 5-ին, հասցեն՝ ք. Երևան, Մոսկովյան 24, բն. 2) հայ ժամանակակից, երիտասարդ, տաղանդավոր ջութակահարներից է: Նրա բացառիկ տաղանդի մասին է վկայում այն, որ նա հանրապետական և միջազգային փառատոների, մրցույթների մրցանակակիր և դափնեկիր է: Հայ կատարողական արվեստում ակնառու նվաճումների, ինչպես նաև մշակութային գործունեության համար Սերգեյ Խաչատրյանը Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրով պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով: Հեղինակավոր «Էլիզաբեթ թագուհի» ջութակահարների միջազգային մրցույթում առաջին բացարձակ մրցանակը նվաճելու համար նա ՀՀ մշակույթի նախարարի 2005 թ. սեպտեմբերի 26-ի N 461-Ա հրամանով պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

2003 թ. Գերմանիայի դաշնությունում ՀՀ դեսպանը դիմել էր ԱԳՆ՝ խնդրելով աջակցել ՀՀ քաղաքացի, Գերմանիայի Կառլսռուհեի կոնսերվատորիայի ուսանող, տաղանդավոր ջութակահար Սերգեյ Խաչատրյանին «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի սահմաններում, որպես բացառիկ ունակությունների տեր ուսանողի համապատասխան տարկետում տալու համար: 2003 թ. հոկտեմբերի 30-ի ՀՀ Կառավարության N 1349-Ա որոշմամբ Սերգեյ Խաչատրյանին տրվեց տարկետում մինչև 2008 թ. աշնանային զորակոչը: 2008 թ. բարձր առաջադիմությամբ ավարտելով Կառլսռուհեի կոնսերվատորիան՝ նույն թվականին ընդունվեց վերոնշյալ կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Ուսմանը զուգընթաց Ս. Խաչատրյանը ծավալել է նաև համերգային լայն գործունեություն: Մենահամերգներով և նվագախմբերի հետ բազմիցս հանդես է եկել Հայաստանում և եվրոպական երկրներում:

2010-2012 թթ. Սերգեյ Խաչատրյանը Հայաստանում և արտերկրում հանդես է գալու մենահամերգներով, հյուրախաղերով, ելույթներ է ունենալու տարբեր նվագախմբերի հետ: Մասնավորապես՝ ծրագրված են ելույթները Փարիզի, Շվեդիայի ռադիոյի, Մելբուռնի և Սիդնեյի սիմֆոնիկ, Մյունխենի, Հունգարական ազգային, Մարինյան թատրոնի, Ռուսական ազգային, Սեուլի ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ: Նախատեսված են նաև մենահամերգներ Լոնդունում, Փարիզում և ԱՄՆ-ում:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ առաջարկում ենք Սերգեյ Խաչատրյանին ազատել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

Նախարար՝ Հ. Պողոսյան